ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
Հայաստանի Գիտությունների Ազգային
Ակադեմիայի նախագահ

ՍՐՏԻ ԽՈՍՔ
ՆՈՐԸՆՏԻՐ ԳԱՐԵԳԻՆ Բ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Պատմական իրադարձության ականատեսներ եղանք ազգովի. ընտրվեց Ամենայն Հայոց նոր Կաթողիկոս: Լուսավորչի Գահակալի հետ կապված հույսերն ու ակնկալիքները մեծ են: Մեծ՝ նամանավանդ այսօրվա իրականության ծանր պայմաններում, երբ ոչ միայն առկա են տնտեսական ու նյութական դժվարություններ, այլև հոգևոր-բարոյական աշխարհում առապացող անառողջ երևույթներ:

Իմ երկարամյա փորձառությունը, որպես երբեմնի պետական բարձրաստիճան գործիչ և այժմ էլ Ազգային Ակադեմիայի նախագահ, այն կայուն համոզմունքն է ձևավորել, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը չափազանց զորեղ բարոյական լծակներ ունի ողջ հայության կյանքում՝ բարեշրջող ու միավորող դեր կատարելու համար: Նորընտիր Գարեգին Բ Կաթողիկոսին ճանաչում եմ բազում տարիներ, և, ինչպես ասում է մեր ժողովուրդը՝ «աղ ու հաց» շատ ենք կիսել: Մշտապես գնահատել եմ հոգևոր ծառայության ու աշխատանքի մեջ նրա դրսևորած ինքնամոռացումը, սեփական անձի մասին մոռանալու կարողությունն ու ձիրքը:

Վստահ եմ, որ մեր սիրելի Վեհափառն իր այս կարողությամբ ու սրտացավությամբ հովվելու է մեր ժողովրդին՝ նրան բազում մխիթարություններ պարգևելով:

Հայ ժողովուրդը, իր պատմության այս բարդ պահերից մեկին, կանգնած է երրորդ հազարամյակի շեմին նոր ապրումներով ու ակնկալիքներով: Հայ Եկեղեցու Հայրերը մշտապես եղել են ժողովրդի հոգևոր առաջնորդները, և ես վստահ եմ, որ նորընտիր Հայոց Վեհափառը կհետևի նրանց պատգամին և ուղեցույց կլինի ազգին՝ համախմբվելու ընդհանուր նպատակի շուրջ, հանուն հայ ժողովրդի բարօրության:

Բարի երթ Քեզ, նորընտիր Հայրապետ: